Կայուն նախագծի նախագծման ուղեցույց

2020

An initiative contributing

One planet
live with care

Սույն տեղեկատվական նյութը պատկանում է «Երիտասարդ մասնագետների խրախուսում՝ գյուղատնտեսական սննդի արժեքային շղթաների էլեկտրիֆիկացման և կայուն բիզնես մոդելների ստեղծման համար» ծրագրին և մշակվել է հետևյալ կազմակերպությունների կողմից՝

AWHHE

CENTRO DE ENERGÍA
UNIVERSIDAD DE CHILE

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

05 Ներածություն

05 Դերեր և պատասխանատվություններ

09 Մեթոդաբանություն

13 Օրինակ

16 Հավելված

Ներածություն

«Երիտասարդ մասնագետների խրախուսում՝ գյուղատնտեսական սննդի արժեքային շղթաների էլեկտրիֆիկացման և կայուն բիզնես մոդելների ստեղծման համար» ծրագրի նպատակներից է՝ խթանել առավել առողջ կենսակերպը և բարելավել գյուղատնտեսական սննդի արժեքային շղթան՝ զարգացնելով կայուն բիզնես մոդելներ և խրախուսելով երիտասարդ մասնագետներին՝գյուղական համայնքների հետ համատեղ կարողություններ ստեղծելու համար:

Այս նախադրյալին համապատասխան ստեղծվել է սույն ուղեցույցը, որը բաղկացած է պարզ մեթոդաբանությունից: Վերջինս կոչված է աջակցելու կայուն նախագծերի նախագծմանը: Բացի այդ, զետեղված են հավելվածներ, որոնք կնպաստեն տարբեր խնդիրների իրականացմանը: Կարևոր է նշել, որ սույն ուղեցույցը ծառայում է որպես տեղեկանք և կարող է հարմարեցվել՝ ըստ համատեքստի և բնակչության:

Ակնկալվում է, որ այս գործիքն իրական աջակցություն կլինի տարբեր նախագծերի կայունության ապահովման համար: Նման հաջողության հասնելու համար անհրաժեշտ է համայնքների համապատասխան ձևավորում և մասնակցություն՝ կայուն սոցիալ-տեխնիկական համակարգերի համատեղ կառուցման գործընթացի միջոցով, որի ընթացքում համայնքները կարող են յուրացնել այն տեխնոլոգիաները, որոնք թույլ են տալիս նրանց ժամանակի ընթացքում կայուն կերպով բարելավել իրենց կյանքի պայմանները:

Դերեր և պատասխանատվություններ

Ծրագիրը հաջողությամբ ներդնելու համար շատ կարևոր է ծրագրին մասնակից շահագրգիռ կողմերի հետաքրքրությունն ու նվիրվածությունը:

Դրա համար անհրաժեշտ է բացահայտել այն դերակատարումներն ու գործողությունները, որոնք մարդիկ պետք է կատարեն ծրագրի իրականացման ընթացքում: Միջդիսցիպլինար թիմ ունենալը, որը բաղկացած է տեխնիկներից և տեղական հիմնական դերակատարներից (համայնք, իշխանություններ, հասարակական կազմակերպություններ և այլն), հիմնարար նշանակություն կունենա գործունեության շրջանակում հավասարակշռության պահպանման համար:

Ծրագրի շրջանակում կարող են որոշվել հետևյալ շահագրգիռ կողմերը՝

- քաղաքապետարան/համայնքապետարան և կառավարություն,
- հասարակական կազմակերպություն,
- մասնագետներ և տեխնիկներ,
- մաքուր տեխնոլոգիա արտադրողներ և մատակարարներ,
- էներգաբաշխիչ ընկերություններ,
- դպրոցներ և համալսարաններ,
- սոցիալական խմբեր։

Շահագրգիռ կողմերը պարզելուց հետո պետք է կատարվի դերաբաշխում՝ ապահովելու համար գործողությունների անխոչընդոտ զարգացումն ու իրականացումը։

Պետք է նշել, որ դերակատարումների նկարագրությունը և նույնականացումը կախված կլինի նախագծի տեսակից, աշխարհագրությունից, բնակչությունից և այլն։

Ստորև բերված է այն անհատների կամ կազմակերպությունների հիմնական գործառույթների և պարտականությունների ընդհանուր նկարագիրը, որոնք պետք է մասնակցեն նախագծին։

ՇԱՀԱԳՐԳԻՌ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Սա մարդկանց խումբ է, որոնք ցանկանում են ծրագիրն իրականացնել համայնքում՝ կյանքի որակը բարելավելու համար։

Շահագրգիռ կազմակերպությունը պատասխանատու է որոշումների կայացման գործընթացում ծրագրի համակարգող թիմին աջակցություն ցուցաբերելու համար։ Դրա անդամները հանդես են գալիս որպես ծրագրի խորհրդատուներ։

Կազմակերպության անդամները պետք է ունենան հաղորդակցության ուղիները հեշտացնելու լիազորություն։

Այլ պարտականությունները ներառում են ծրագրի նպատակների հաստատումը, ռեսուրսների մատչելիության ապահովումը, կազմակերպության շրջանակում ծրագրին աջակցությունը և խթանումը։

ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԹԻՄ

Համակարգող թիմին վերապահված է ծրագրի ղեկավարումը: Այն նշանակում է թիմի անդամներին և կազմակերպում աշխատանքները՝ դրանց արդյունավետությունն ապահովելու համար:

Այս թիմը պատասխանատու է ծրագրի իրականացումը վերահսկելու համար՝ համաձայն շահագրգիռ կազմակերպության կողմից սահմանված պահանջների, որպեսզի նպատակն իրականացվի ռեսուրսների օգտագործմամբ և համաձայն նախատեսված ժամանակացույցի:

Այն ղեկավարում է ծրագրի թիմը, որի համար նա պետք է ունենա համապատասխան տեխնիկական, անձնական և սոցիալական հմտություններ:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԹԻՄ

Թիմը բաղկացած է տարբեր ոլորտների փորձագետներից, այդ թվում քաղաքացիական, մեխանիկական, էներգետիկայի, կառավարման և ավտոմատացման, կառուցվածքային և ծախսային ոլորտների ինժեներներից:

Թիմը ծրագիրն իրականացնում է՝ համաձայն համակարգող խմբի կողմից սահմանված պահանջների, որպեսզի նպատակն իրականացվի ռեսուրսների օգտագործմամբ և ըստ ժամանակացույցի:

Թիմը մշակում է աշխատանքի բնութագրերը:

Կատարում է նաև ծրագրի տեխնիկական գործընկերոջ գործառույթը:

ՄԱՔՈՒՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ ԱՐՏԱԴՐՈՂՆԵՐ ԵՎ ՄԱՏԱԿԱՐԱՐՆԵՐ

Արտադրողներին վերապահված են դերակատարումներ՝ շնորհիվ իրենց սարքավորումների տեխնոլոգիայի ոլորտում ունեցած փորձի: Որոշ դեպքերում սարքավորումների նույն մատակարարը տրամադրում է ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ինժեներական ծառայություններ:

ԱՅԼ ԱՆՁԻՆՔ

Կախված ծրագրի և ընկերության տեսակից և չափից, կարող են լինել նաև այլ դերակատարներ, օրինակ՝ աուդիտոր, ներդրումային ընկերություններ, ուսուցիչներ, իրավաբաններ և այլն:

Մեթոդաբանություն

Առաջարկվող մեթոդաբանությունը միջդիսցիպլինար մոտեցում է, որը բացի ֆորմալ գիտելիքներից, հաշվի է առնում նաև տեղական գիտելիքները: Անհրաժեշտ է ընդգծել, որ մեթոդաբանությունը դուրս է գալիս իսկության սոցիալական հաստատման շրջանակից, քանի որ այն ընդգրկում է համայնքը նախագծի նախագծման սկզբից, իրականացման և շահագործման փուլից մինչև նախագծի վերջնական գնահատման փուլ:

Նպատակն այն է, որ ստացված արտադրանքը մշակվի և համապատասխանեցվի տեղական պայմաններին՝ հարգելով դրանց մշակութային, սոցիալական, բնապահպանական և տնտեսական առանձնահատկություններն՝ այդպիսով խթանելով առաջացած նոր սոցիալ-տեխնիկական համակարգի յուրացումը:

Առաջարկվող մեթոդաբանությունը դիտարկում է չորս փուլ՝ 1) սոցիալ-համակարգի և կայունության ծրագրի նախագծում, (3) իրականացում և գործարկում, (4) գործարկում, գնահատում և տարածում:

Չորս փուլերը կենտրոնանում են գիտելիքների և համագործակցային ուսուցման վրա՝ հաշվի առնելով ճկուն նախագծումը՝ ներգրավելով ինչպես նախաձեռնության պատասխանատու մասնագետներին, այնպես էլ այն համայնքին, որին ուղղված է նախագիծը:

ՓՈՒԼ 1

Սոցիալ-տեխնիկական ախտորոշումը և թիմի ձևավորումը հաշվի են առնում մի քանի տարրերի մշակումը, որոնք թույլ են տալիս սահմանազատել գործողությունների ընդհանուր շրջանակն ինչպես տեխնիկների, այնպես էլ նախագծում ներգրավված կազմակերպությունների համար:

Նախ և առաջ, անհրաժեշտ է սահմանել այն տեխնիկականայն տարրերը, որոնք կմնան ճկուն ցանկացած փոփոխության հանդեպ և այն տարրերը, որոնք պետք է մնան անփոփոխ՝ ելնելով նախագծի հիմնական պահանջներից:

Երկրորդ, կազմվում են աշխատանքային թիմեր և նշանակվում են նրանց գործառույթները: Այս դեպքում անհրաժեշտություն կա անդրադառնալու նախորդ գլխին՝ շահագրգիռ կողմերը և նրանց պարտականությունները պարզելու համար:

Երրորդ՝ իրականացնել մասնակցային սոցիալ-տեխնիկական ախտորոշում, որը թույլ է տալիս բացահայտել ծրագրի իրականացման համար կարևոր պայմանները՝ սոցիալ-մշակութային, բնապահպանական, տնտեսական և տեխնիկական, ինչպես նաև կայուն լուծման համար մշակել նախնական առաջարկ՝ հաշվի առնելով հնարավոր սցենարների այլընտրանքները:

ՓՈՒԼ 2

Սոցիալ-տեխնիկական նախագծման և կայունության պլանը դիտարկվում է որպես գործընթացի առավել կարևոր և բարդ փուլ: Այստեղ փորձարկվում է տեխնիկական խմբերի ճկունությունը՝ ներգրավված համայնքների տեղական գիտելիքների բաց լինելու առումով:

Այս փուլում ակնկալվող արդյունքը ներառում է համատեղ մշակված տեխնիկական նախագիծը, որը մեծապես համապատասխանում է տեղական արտադրական և մշակութային բնութագրերին, ինչպես նաև կառավարման մոդելի նախագծումը, որը կազմակերպում է լուծումը խթանող գործողությունները, և կայունության ծրագիրը, որը թույլ է տալիս ծրագրին կայուն լինել երկարաժամկետ հեռանկարում:

Նախագծի համատեղ մշակումը նպաստում է ներգրավված համայնքների կողմից ծրագրի յուրացմանն, ի թիվս այլ կարևոր հարցերի՝ հասկանալով օգտագործվող տեխնոլոգիայի բարդությունը, նախագծի ժամանակին պահպանման համար անհրաժեշտ բիզնես մոդելի սահմանումը:

Սոցիալ-տեխնիկական համակարգի բնութագրերը հնարավորություն են տալիս համատեղ մշակել համակարգի կայունության ծրագիր և նախագծի իրականացման ռազմավարություն:

ՓՈՒԼ 3

Փորձարկման են ենթարկվում նախորդ փուլում սահմանված սահմանումների իրականացումը և գործարկման գործընթացը: Նախագիծը մշակվում է՝ նկատի ունենալով իրականացման ռազմավարությունը՝ հաշվի առնելով համայնքի մասնակցությունը դրա տարբեր ասպեկտներում: Հետագայում, դրա իրականացման փուլում, կարևոր է գրանցել ծրագրի հետ կապված դերակատարների առաջին տպավորությունները, կատարել անհրաժեշտ ճշգրտումներ և հարմարեցումներ, որոնք

նպաստում են տեխնոլոգիայի ավելի լավ ներդրմանը և շահագործմանը: Միևնույն ժամանակ, այս փուլում իրականացվում են սոցիալ-տեխնիկական համակարգի շահագործման և պահպանման վերաբերյալ դասընթացներ (ներառյալ տեխնոլոգիական հարմարեցումը և կառավարման համակարգի զարգացումը):

ՓՈՒԼ 4

Աշխատանքը, գնահատումը և տարածումը հետապնդում են ներդրված սոցիալ-տեխնիկական համակարգի ինքնուրույն յուրացման նպատակ. այստեղ չափվում են կայունության ցուցանիշները, որի արդյունքում կներկայացվեն ռազմավարություններ և ծրագրեր՝ այլ գործընթացների շարունակման համար:

Միևնույն ժամանակ, նախատեսվում է իրականացնել տարածման ռազմավարություններ, որոնք տեխնոլոգիական նախագիծը կապում են տեղական և տարածաշրջանային միջավայրի հետ՝ նպատակ ունենալով խթանել իր տարածքում առաջարկվող էներգետիկ լուծման կրկնօրինակելիությունը՝ կապելով ներգրավված համայնքն այլ նմանատիպ փորձերի հետ: Չնայած փուլերը հաջորդական են, անհրաժեշտ է հստակեցնել, որ նրանց միջև սահմանները խիստ չեն, և պետք է ճշգրտվեն՝ ըստ այն նախագծերի առանձնահատկությունների, որտեղ դրանք օգտագործվում են:

Նպատակների ամփոփ աղյուսակն՝ ըստ փուլերի

Փուլ 1	- Համատեղ շինարարության ծավալի սահմանում - Աշխատանքային թիմերի դերերի բացահայտում և սահմանում - Նախագծի գիտելիքների խթանում - Մասնակցային ախտորոշում - Պայմանների ստեղծում՝ մարտահրավերներին դիմակայելու համար
Փուլ 2	- Որոշումներ կայացնելիս համայնքի տեղեկացված մասնակցության համար պայմանների ստեղծում - Ցանկությունների սցենարների սահմանում - Սոցիալ-տեխնիկական համակարգի բնութագրերի սահմանում՝ բիզնես մոդելի և կառավարման մոդելի տեխնոլոգիական կիրառում և ձևավորում - Ծրագրի կայունության ռազմավարության պլանավորում և իրականացում
Փուլ 3	- Ծրագրի իրականացում համայնքի ակտիվ մասնակցությամբ - Գործարկման ընթացքում առաջին տպավորությունների գրանցում - Էներգետիկ լուծման կառավարման համար տեխնիկական և կազմակերպչական կարողությունների զարգացում
Փուլ 4	- Շահագործման մշտադիտարկում - Նախագծի գնահատում՝ ըստ ցուցանիշների - Թույլ կողմերի վերացման ռազմավարության մշակում - Ծրագրի տարածում

Օրինակ

«Երիտասարդ մասնագետների խրախուսում՝ գյուղատնտեսական սննդի արժեքային շղթաների էլեկտրիֆիկացման և կայուն բիզնես մոդելների ստեղծման համար» ծրագիրը մշակվել է հետևյալ թիմի կողմից՝

Դերը	Անունը
Համակարգող թիմ	«Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» ՀԿ
Տեխնիկական թիմ	Էներգետիկայի կենտրոն
Շահագրգիռ կազմակերպություն	Սոլակ համայնք
Այլ կազմակերպություններ	Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան

Թիմի կազմավորումից հետո սկսվեց Սոլակ համայնքի սոցիալ-տեխնիկական ախտորոշումը: Այս փուլում բացահայտվեցին խնդիրն ու առարկան: Այս հատուկ ծրագրի համար առաջարկվել է գյուղատնտեսական սննդի շղթան, քանի որ ցանկալի է ստեղծել կայուն ապրանքներ, որոնք կարող են բարելավել կենսակերպը:

2-րդ փուլում ներկայացվեցին տարբեր լուծումներ: Այս առաջարկները նկարագրվել են իրենց համապատասխան հիմնական տեխնիկական և տնտեսական բնութագրերով: Վերջապես, մի քանի հանդիպումներից և գնահատականներից հետո ընտրվեց մեկը: Վերջնական առաջարկը մանրամասնվեց՝ ներկայացնելով դրա հետ կապված տեխնիկական և տնտեսական հարցերի մեթոդաբանությունն ու հատուկ հաշվարկները:

Ծրագրային առաջարկի ներկայացման և գործարկման 3-րդ փուլը ներառում էր՝ հողատարածքի մաքրումը, տանիքում արևային մարտկոցների տեղադրումը, ջրի պոմպի փոխարինումը, նոր խողովակաշարերի և էլեկտրաէներգայի արտադրության համակարգի տեղադրումը:

Վերջապես, երրորդ փուլում դիտարկվում են մշտադիտարկման պլանը և տարբեր ուղեցույցներ՝ շարունակելու համար ծրագրի բարելավումն ինչպես տեխնիկական, այնպես էլ տնտեսական առումներով:

Հիշե՛ք, որ բոլոր ծրագրերը պետք է ենթակա լինեն իրավական ստուգման, այսինքն, պետք է համապատասխանեն գործող ազգային կամ տեղական նորմերին: Օրինակ, սույն ծրագրի իրականացման համար նախապես և ընթացքում ստուգվել են ջրօգտագործման, շինարարության, էլեկտրաէներգիայի վերաբերյալ թույլտվությունները: Առավել մանրամասն տեղեկատվության համար կարող եք դիմել խորհրդատուին:

Ստորև բերված են Սոլակի կայուն ոռոգման համակարգի կառուցման գործընթացի մի քանի պատկերներ:

Այց Սոլակ համայնք

Աշխատանքային հանդիպումներ համայնքի, համալսարանականների, ՀԿՀԱԱԾՄ ՀԿ-ի և Էներգետիկայի կենտրոնի ներկայացուցիչների հետ



Առաջարկվող լուծումներ՝ բազմաֆունկցիոնալ տարածք՝ ջերմոց և փաթեթավորման օբյեկտ, ԱՖԿ (վերևից ձախից առաջինը), ջերմոց, ԱՖԿ, ջրի պոմպ (ներքևից ձախից առաջինը), գ) ջերմոց, ԱՖԿ, ջերմային պոմպ և **ջրի պոմպ (ներքևից ձախից երկրորդը), փորձնական ծրագրի** «կայուն ոռոգման» վերջնական լուծումը (ներքևից ձախից երրորդը)

Կայուն ոռոգման համակարգի կառուցումից առաջ և հետո

Հավելված

ՍՏՈՒԳԱԹԵՐԹ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Մասնակցի կոնտակտային տվյալներ	Կազմակերպություն	Համակարգող թիմ	Տեխնիկական թիմ
Պատասխանատու անձի անունը, ազգանունը			
Պաշտոնը			
Հասցեն			
Հեռախոսահամարը			
Էլ.փոստի հասցեն			
Վեբ կայք			

ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Ոլորտ / գործունեություն	
Արտադրված ապրանքներ / առաջադրանք	
Արտադրության մակարդակները	
Աշխատանքի ռեժիմ	
Սեզոնայնություն	
Էներգիայի սպառում	
Արտադրության գործընթացին վերաբերող այլ համապատասխան ասպեկտներ և խնդիրներ	

ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Տեղադրությունը	
Ներկա իրավիճակը	
Հիմնախնդիրը/կարիքը	
Ծրագրի անվանումը	
Համապատասխան ցուցանիշները	
Ծրագրի նպատակը	
Ծրագրի հատուկ նպատակները	
Ծրագրի ընդհանուր նկարագիրը	
Լուծման սխեման	
Տեխնոլոգիայի նկարագիրը	
Էլեկտրաէներգիայի պահանջարկի հաշվարկը	
Ծրագրի արժեքը	
Խնայողություններ	
Ծրագրի առավելությունները (սոցիալական, բնապահպանական, տնտեսական)	
Իրավական տեղեկատվություն	
Ֆինանսական տեղեկատվություն	
Շինարարության ժամանակահատվածը	
Նկարներ	
Եզրակացություն	
Աղբյուրը	

«Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» ՀԿ
ՀՀ, Երևան, 0019, Բաղրամյան պող. 24բ
Հեռ.՝ (+374 10) 52 36 04
Էլ. փոստ՝ office@awhhe.am
Վեբ կայք՝ http://www.awhhe.am